

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴՅԱՆ

պարսկական գիր. թեկնածու, ՄՄ

«ԺԲՆ ԼԵՒՈՆ» ԱՐՔԱՅԱՏՈՂՄԸ
ԿԱՄ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԼԵՒՈՆՅԱՆՆԵՐԸ

ՓԼ. Դարի վերջին քառորդին պետականությունը կորցրած եւ ավերիչ ասպատակություններից խուսափող հայություն զանգվածային գաղթը Մեծ Հայքից դեպի արեւմուտք եւ հարավ-արեւմուտք փոխեց Փոքր Ասիայի, Ասորիքի եւ Վերին Միջագետքի ժողովրդագրական պատկերը: Դրա հետեւանքով ստեղծվեց հայկական իշխանությունների մի մեծ ցանց: Հատկապես Եփրատացիքն¹ ու Կիլիկիան ստացան հայկական դիմագիծ, մասամբ կամ ամբողջությամբ հայացան: Հարեւան ժողովուրդները ինչ-որ անվանում պիտի տային նորաստեղծ «Հայաշխարհին», այդտեղ ապրող ժողովուրդին ու նաեւ այդ երկրի իշխողներին: Հատկապես այս վերջինի հետ է առնչվում «Իբն Լեւոն» արտահայտությունը, որի իմաստային նշանակության բացահայտման է նվիրված սույն հոդվածը:

Հայկական Կիլիկիայի իշխողներին հարեւան երկրներում տրված անվանումները պարզելու համար փորձենք քննել հիշյալ դարաշրջանի պատմական երկերը՝ հիմնականում անդրադառնալով արաբալեզու հեղինակներին: Բանն այն է, որ իրենց ունեցած տարբերություններով հանդերձ՝ մյուս պատմիչների (հայ, բյուզանդացի, ասորի, լատին) գործածած անվանումները Հայկական Կիլիկիայի առաջնորդների, կամ իշխող տոհմի

¹ Եփրատացիք, Եփրատացվոց աշխարհի կամ Մերձեփրատյան երկրամաս բառերը հունարեն *Էֆրատիսենս* բառի հայկական տարբերակն է եւ մատնանշում է այն երկրամասը, որ գտնվում է Կիլիկիայի եւ Եփրատ գետի միջև: Դրա մեջ են մտնում Քեստնք, Ռարանք, Թվաշարք, Ծովքը, Հոռնկյան եւ այլն: Երբեմն սրա մեջ են մտնում նաեւ Այնթապը, Քիլիսը, Մարաշը եւ այլն: Այս տարածքը ընդգրկված էր Փիլարտոսի, ապա նաեւ՝ Գող Վասիլի իշխանությունների մեջ: Կիլիկիայի հայկական պետության շրջանում այս հողերը անցնում են Կիլիկիային միայն 1259-1260 թթ. մոնղոլական արշավանքից հետո եւ մի կարճ շրջան մնում հայոց թագավորության կազմում: ԺԱ. դարից հետո մինչեւ Ի. դարի սկիզբ եղել է հայաբնակ:

վերաբերյալ, միմյանցից շատ չեն տարբերվում: Այլ է պարագան արաբական պատմագրության դեպքում:

Արաբացիները եւ այլաբեզու պատմագիրներին միջեւ առաջին ականառու տարբերությունն այն է, որ արաբական երկերում հազվադեպ է հանդիպում «Կիլիկիա» բառը², մինչդեռ մյուս բոլոր աղբյուրներում, հետեւելով հռոմեական կամ բյուզանդական ավանդույթին, «Կիլիկիա»-ն, որպես երկրի անվանում, լայնորեն օգտագործվում է:

Երկրորդ ականառու տարբերությունն այն է, որ Կիլիկիայի մասին խոսելիս արաբ պատմիչները երբեւէ չեն հիշատակում երկրում իշխած երկու հայտնի տոհմերից (Ռուբինյաններ եւ Հեթումյաններ) եւ ոչ մեկին³: Փոխարենը հաճախակի կիրառվում է «Իբն Լեոն» բառակապակցությունը: Վերջինիս հանդիպում ենք ԺԲ.-ԺԴ. դարերի հեղինակներ Իբն ալ-Կալանիսի, Իբն Շադդադի, Իբն ալ-Իբրիի (Բար Հեբրեոս), Իբն ալ-Ասիրի, Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմի, Աբու Շամայի, Աբու-լ-Ֆիդայի, ալ-Ջահաբի, Իբն ալ-Դավադարի եւ այլոց երկերում:

Խնդրո առարկա հարցի հետազոտման համար կարեւոր նշանակություն ունեն ասորի պատմիչների երկերը: Ուստի նախքան արաբական երկերի քննությունը, նախ դիմենք ասորի պատմագրությանը, քանի որ ասորի պատմիչները մի կողմից քաջ ծանոթ էին Հայ եւ բյուզանդացի հեղինակների գործերին, մյուս կողմից՝ սերտ առնչության մեջ էին արաբական միջավայրի հետ, իսկ նրանցից ոմանք նույնիսկ երկվեզու էին (ինչպես օրինակ Բար Հեբրեոսը (արաբ. տարբերակով՝ Իբն ալ-Իբրի)) եւ հաճախ բառեր ու հասկացություններ փոխանցողների դեր էին կատարում:

ԺԲ. դարի նշանավոր ասորի պատմիչ է Անանուն Եդեսացին: Նրա տեղեկություններից ուշագրավ է հետեւյալը. «Այդ ժամանակ Կիլիկիայում իշխում էր Ռուբենի որդի Լեոն անունով հայը, որը Ուռհայի իշխան կրտսեր Ժուլինի քեռին էր»⁴: Հետագա շարադրանքում (որտեղ խոսում է բյուզանդական կայսր Հովհաննես Կոմենենոսի հայտնի արշավանքի եւ Լեոն իշխանի գերեվարման մասին) պատմիչը նրան կոչում է պարզապես «Լեոն», իսկ մի տեղ էլ «Լեոն հայ»: Հայտնի է, որ Լեոնը Ռուբենի ոչ

² Sliu Ibn Abd al-Dahir, Al-Rawd al-zahir, Riyad, 1976, p. 439.

³ Այս առումով թերևս րացատություն է 4-րդ ալ-Դին Իբն ալ-Ադիմի հաղորդումը, որն իր պատմական երկում խոսելով 1137 թ. դեպքերի մասին՝ մի տեղ Լեոն իշխանին կոչում է «Լամոն իբն Ռուբայ» (Լեոն իբն Ռուբեն), որը կարող է թարգմանվել նաև որպես «Լեոն Ռուբինյան» (Kamal al-Din Ibn al-Adim, Tarikh Halab, v. II, Damascus, 1954, p. 262):

⁴ «Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին», 12, Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, Երևան, 1982, թարգմ. Լ. Տեր-Պետրոսյանի, էջ 79 (այսուհետև՝ Անանուն Եդեսացի):

թե որդին էր, այլ թուր (որդի Կոստանդինի): Ձի բացառվում, որ նա այստեղ նկատի ունի Լեւոնի՝ Ռուբենի տոհմից սերված լինելը, այլ ոչ թե անմիջապես նրա որդին լինելը⁵: Այս ենթադրությունը հաստատվում է այլ էջերում՝ «Անարգաբայում եւ Կիլիկիայում իշխում էին հայերը՝ Ռուբենի որդիները»⁶, «Այդ ժամանակ Ռուբենի սերնդի հայերը, որոնք իշխում էին Կիլիկիայի գավառներում ու երկրի բերդերում...»⁷:

Խոսելով 1205 թվականի դեպքերի մասին եւ անդրադառնալով Լեւոն Մեծագործին՝ Անանուն Եղեսացին գրում է. «...Կիլիկիայի իշխան Լեւոն հայր դիմեց Խոսրովշահին...»⁸: Այլ տեղերում օգտագործվում է նաեւ «Թորոս հայ»: Կիլիկիայի իշխողներին անվանելու այս ձեւը՝ «Թորոս Հայր», «Լեւոն Հայր», կամ «Հայազգի Թորոսը», «Հայազգի Լեւոնը», հանդիպում ենք նաեւ արաբ պատմիչների երկերում:

Ասորի պատմիչները, այդ թվում եւ Անանուն Եղեսացին, հայերի կամ հույների պես շարունակում են երկիրը կոչել Կիլիկիա. «...այնտեղից նրանք մտան Կիլիկիո երկիրը»⁹, «Կիլիկիայի իշխանը, որի անունն էր Մլեհ»¹⁰:

ԺԲ. դարի ամենահայտնի ասորի պատմիչն է Միքայել Ասորին, որը Կիլիկիայի մասին հարուստ տեղեկություններ հաղորդող եւ քաջատեղյակ մատենագիրներից է: Նա եւս երկիրը կոչում է «Կիլիկիա», իսկ նրա իշխողներին ընդհանրական ձեւով անվանում է «Ռուբենի որդիներ», «Ռուբենի զարմ», «Ռուբինյաններ»: «Կային նաեւ հայեր, որոնք տիրում էին մի շարք տարածքների Կիլիկիայի շրջանում, նրանք կոչվում էին «Ռուբենի որդիներ» (Bene Ruben)¹¹:

Պատմիչը հիշատակում է հայ իշխաններին իրենց անունով, առանց որեւէ տիտղոս ավելացնելու՝ Ռուբեն, Կոստանդին, Թորոս, Լեւոն: Լավագույն դեպքում ավելացվում է «Հայ», «Հայազգի» մակդիրը: «Կիլիկիայի լեռներում կային երկու եղբայր՝ Ռուբենի որդի Կոստանդինի որդիները»¹², «վերջինս փախավ Թորոս Հայի մոտ, Կիլիկիա»¹³, «Այդ տարին մահացավ

⁵ Հմմտ. «Լաուն իբն Ռուրալ» (Kamal al-Din Ibn al-Adim, Tarikh Halab, v.II, Damascus, 1954, p. 262):

⁶ Նույն տեղում, էջ 40:

⁷ Նույն տեղում, էջ 74:

⁸ Նույն տեղում, էջ 194:

⁹ Անանուն Աղեսացի, էջ 37:

¹⁰ Նույն տեղում, էջ 135:

¹¹ Chronique de Michel le Syrien, ed.et tr. Par J.-B. Chabot, t.III, Bruxelles, 1963, p. 187 (այսմիսուն՝ Michel le Syrien).

¹² Ibidem, p. 198.

¹³ Ibidem, p. 223.

Թորոս Հայր՝ Կիլիկիայի կառավարիչը: Նրան Հաջորդեց եղբայրը՝ Լեւոնը¹⁴, իսկ մի այլ տեղ ասվում է «Լեւոն Հայր»¹⁵:

Նույն ձեւով է հիշատակվում նաեւ Թորոս Բ.-ն. «Լեւոնի որդիներին մեկը՝ Թորոսը, փախչում է (գերությունից) ու մեկնում այնտեղից»¹⁶, «...Կիլիկիայի վեհանձն (արժանի) կառավարիչ Թորոսը»¹⁷, կամ «...Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի իշխանը»¹⁸: Հաջորդ երեք Ռուբինյանները եւս՝ Մլեհը, Ռուբեն Գ.-ն եւ Լեւոն Բ.-ն հիշատակվում են իբրեւ Կիլիկիայի իշխաններ¹⁹:

Ավելի ուշ շրջանի պատմիչ Բար Հեբրեոսը (ԺԳ. դ.) միայն մի տեղ է Կիլիկիան կոչում Հայաստան²⁰, իսկ մնացած ողջ շարադրանքում այն բազմիցս հիշատակում է: Օրինակ, նշում է, որ այսինչ անձը մահացավ ու թաղվեց Կիլիկիայի Տարսոսում²¹: Մի այլ տեղ նշում է. «Այդ ժամանակ Կիլիկիայում իշխում էին Ռուբենի որդի Կոստանդինի երկու որդիները»²², «Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի կառավարիչը»²³: Լեւոն իշխանի համար ասում է «Հայազգի Լեւոնը»՝ նախապես երկրի համար «Կիլիկիա» բառը գործածելով²⁴:

Ուսումնասիրելով Բար Հեբրեոսի հաղորդումները Լեւոն Ա. իշխանի մասին՝ կարելի է նշել, որ Կիլիկիան հենց նրա օրոք տարածաշրջանում դարձավ գործոն՝ հիմք հանդիսանալով, որ արաբ հեղինակները կիրառության մեջ դնեն «Լեւոնյաններ», կամ «Լեւոնի որդիներ» ձեւը՝ որպես տոհմանուն:

Ասորի պատմիչը նշում է. «Հայազգի Լեւոնը՝ Կիլիկիայի կառավարիչը»²⁵, «Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի կառավարիչը»²⁶: Միաժամանակ խոսելով Սալահ ալ-Դինի տոհմի ծագման մասին՝ ասում է, որ նրանք Հայաստանի նշանավոր Դվին քաղաքից էին՝ քրդական ծագումով²⁷:

¹⁴ Ibidem, p. 227.

¹⁵ Ibidem, p. 230.

¹⁶ Ibidem, p. 281.

¹⁷ Ibidem, p. 304.

¹⁸ Ibidem, p. 310.

¹⁹ Ibidem, p. 337, 376, 387.

²⁰ The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Faraj, translated by E. Budge, Amsterdam, 1976, p. 237 (այսինքն՝ Bar Hebraeus).

²¹ Ibidem, p. 238, 244.

²² Ibidem, p. 246.

²³ Ibidem, p. 252.

²⁴ Bar Hebraeus, p. 255.

²⁵ Ibidem, p. 275.

²⁶ Ibidem, p. 280.

²⁷ Ibidem, p. 288.

Այսինքն՝ Բար Ղեբրեոսի, ինչպես եւ Միքայել Ասորու²⁸ երկերում, հստակ տարբերակվում են Մեծ Հայքն ու Կիլիկիան. վերջինիս իշխողները հիշատակվում են անունով՝ Ռուբեն, Կոստանդին, իսկ հաջորդները՝ Թորոս Ա., Լեւոն Ա., Թորոս Բ. եւ Մլեհ²⁹, հիշատակվում են՝ գրեթե մշտապես ավելացնելով «Հայազգի» եւ «Կիլիկիայի կառավարիչ» բառերը:

Վերջապես, խոսելով Մլեհի սպանությունից եւ Ռուբեն Գ.-ի՝ իշխանության գլուխ անցնելու մասին, Բար Ղեբրեոսը գրում է՝ «գարձրին իրենց վրա թագավոր»³⁰, բայց հետո նույն Ռուբեն Գ.-ի մասին գրում է որպես Կիլիկիայի կառավարիչ³¹: Նույն ձեւով է հիշատակվում եւ Լեւոն Բ. իշխանապետը³²: 1219 թվականի մասին գրելով (ընդ որում օգտագործելով Հայոց թվականը)³³ նշում է, որ «մահացավ Կիլիկիայի թագավոր Լեւոնը»³³, «եւ Ֆիլիպին դարձրին Կիլիկիայի թագավոր»³⁴, «եւ Հեթումը հռչակվեց Կիլիկիայի թագավոր»³⁵:

Այսպիսով, ասորի պատմիչները շատ լավ տեղյակ են, որ Ռուբենն է հանդիսանում այդ տոհմի ու իշխանության հիմնադիրը, միաժամանակ գործածություն մեջ են դնում «Ռուբենի որդիներ» բառակապակցությունը, հաճախ օգտագործում են նաեւ «Հայազգի Թորոսը», «Հայազգի Լեւոնը» ձեւերը: Վերջապես նրանց հաղորդումներում Կիլիկիայի առաջին երեք իշխանների համեմատ ակնհայտ կարեւորություն է տրվում Լեւոն Ա.-ին (1129-1137): Այս մոտեցումը հատուկ է նաեւ արաբական պատմագրությանը:

Ինչպես հայտնի է, նույն հեղինակը՝ Բար Ղեբրեոսը (Իբն ալ-Իբրի), ունի արաբերենով գրված պատմություն, որն ավելի համառոտ է ասորերենի համեմատությունը եւ կոչվում է «Պետությունների համառոտ պատմություն»³⁶: Համեմատելով այդ հեղինակի՝ երկու տարբեր լեզուներով գրած երկերը՝ հետաքրքիր փաստեր ենք արձանագրում:

Պատմիչը, որն իր ասորերեն աշխատության մեջ բազմիցս հիշատակում էր «Կիլիկիա» բառը, այստեղ այդ տեղանունը բնավ չի գործածում,

²⁸ Michel le Syrien, t. III, p. 325.

²⁹ Ibidem, p. 295.

³⁰ Ibidem, p. 305.

³¹ Ibidem, p. 310.

³² Ibidem, p. 328.

³³ Ibidem, p. 375.

³⁴ Ibidem, p. 380.

³⁵ Ibidem, p. 390.

³⁶ Ibn al-Ibri, Tarikh Mukhtasar ad-Duwal, Beirut, 1890 (Այունիկունի՝ Ibn al-Ibri).

փոխարենը չըջանառվում են «Բիլադ Իբն Լեւոն» (Իբն Լեւոնի երկիր), «Բիլադ ալ-Արման» (Հայոց երկիր):

Մյուս ուշագրավ երեւոյթն այն է, որ իր ասորերեն երկում «Ռուբենի որդիներ» արտահայտությունը մի քանի առիթով օգտագործող հեղինակը արաբերենում, զարմանալի կերպով, ընդհանրապես չի հիշատակում Ռուբեն անունը, այլ նշում է արաբ պատմագրության մեջ ընդունված՝ «Իբն Լեւոն»-ը³⁷, իսկ Հեթում Ա.-ի դեպքում պարզապես ասվում է «Հայոց թագավոր Հեթումը»³⁸:

Բար Հեբրեոսի՝ երկու տարբեր լեզուներով գրած երկերի քննությունը հանգեցնում է հետեւյալ եզրակացության. «Կիլիկիա» բառին համապատասխանում են «Իբն Լեւոնի երկիր», «Հայոց երկիր» անվանումները, երբեմն էլ պարզապես «Դուրուբ» (կիրճեր կամ լեռնանցքներ) բառը: Այլ կերպ ասած՝ Բար Հեբրեոսը արաբերեն գրելիս ոչ թե նույնությամբ կիրառության մեջ է դնում իր գործածած անվանումներն ու բառերները, այլ հետեւում է արաբ պատմագրության մեջ արդեն իսկ արմատացած անուններին ու բառակապակցություններին:

Ասորի պատմագիրների երկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս՝ բացահայտելու Կիլիկյան Հայաստանի վերաբերյալ արաբ պատմագրության մեջ տեղ գտած մի շարք մոտեցումներ ու հասկացություններ:

Փորձենք քննության ենթարկել արաբ պատմիչների երկերը, մասնավորապես Իբն ալ-Կալանիսիի (1070-1160) «Դամասկոսի պատմություն»-ը, Ալ-Կադի Բահա ալ-Դին Իբն Շադդադի (1145-1234) «Այյուբյան Սալահ ալ-Դինի կենսագրություն»-ը, Իբն ալ-Ասիրի (1160-1233) «Լիակատար Պատմություն»-ը եւ «Մոսուլի Աթաբեկների պատմություն»-ը, Յակուտ ալ-Համավիի (1178-1229) «Երկրների բառարանը»³⁹-ը, Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմի (1192-1262) «Հալեպի պատմություն»-ը, Աբու Շամայի (1203-1267) «Քիթաբ ալ-Ռաուդատայն»-ը, Իբն ալ-Դամադարիի († 1313) «Քանզ ալ-դուրար ուա ջամի ալ-դուրար»-ը, Բայբարս ալ-Մանսուրիին վերագրվող († 1325) «Մուխթար ալ-Ախբար»-ը, Աբու-լ-Ֆիդայի (1273-1333) «Ժամանակագրություն»-ը, ալ-Ջահաբիի (1274-1348) «Գիրք մահ-մեդական պետությունների մասին» երկը եւ Իբն Բատուտայի (1304-1369) «Ռիհլա» վերնագրով հայտնի գիրքը:

³⁷ Ibn al-Ibri, p. 459-460, 498-500.

³⁸ Ibidem, p. 459-460, 498-500.

³⁹ Հ. Նալբանդյանը այն թարգմանել է որպես «Աշխարհագրական բառգիրք»:

Նշված հեղինակների շարքում ժամանակագրորեն առաջինը Իբն ալ-Կալանիսին է՝ ԺԲ. դար: Մնացած հեղինակներն իրենց երկերը շարադրել են ԺԳ.-ԺԴ. դարերում, ուստի կարող էին օգտված լինել այս հեղինակի երկից:

Իբն ալ-Կալանիսին Հիջրայի 531 թվականի (1136/1137) դեպքերի վերաբերյալ խոսելով Բյուզանդիայի կայսր Հովհաննես Կոմնենոսի՝ դեպի Կիլիկիա եւ Անտիոք կատարած հայտնի արշավանքի մասին եւ գրելով, թե ինչպես կայսրը նվաճեց Ադանան, Մսիսը եւ Այն Ջարբան, ավելացնում է. «...ապա շրջվեց [կայսրն] ու վերադարձավ դեպի Կիրճերը (այսինքն՝ Կիլիկիա) եւ գրավեց այն բոլոր բերդերն ու շրջակա բնակավայրերը, որ դեռեւս մնացել էին Իբն Լեւոն Հայի ձեռքում»⁴⁰:

Այս հաղորդման մեջ Լեւոն Ա. իշխանը կոչվում է «Իբն Լեւոն», այսինքն՝ «Լեւոնի որդի», մինչդեռ նա որդին է Կոստանդինի: Պարզ է նաեւ, որ ԺԲ. դարում (Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160 թվականին) արդեն իսկ «Իբն Լեւոն»-ը կիրառվում էր:

Իբն ալ-Կալանիսին, Իբն ալ-Ասիրը, Իբն Շադդադը եւ այլ արաբագիր հեղինակներ շատ լավ տեղյակ են Կիլիկյան Հայաստանի պատմությանը, նրանք Ռուբինյան պետության ժամանակակիցներն են, հաճախ ապրել են ոչ հեռու բնակավայրերում (Հալեպ, Մոսուլ եւ այլն) եւ հայտնի են որպես հավաստի աղբյուրներ: Հետեւաբար, նրանք չէին կարող այդ աստիճան անտեղյակ լինել Կիլիկիայի իշխողների մասին եւ բոլորին՝ Կոստանդին, Թորոս Ա., Լեւոն Ա., Թորոս Բ., Ռուբեն Գ., Լեւոն Բ., կոչել «Լեւոնի որդի»:

Կիլիկիայի իշխանների ու թագավորների անունների ճշգրիտ իմացության օրինակները արաբ պատմագրության մեջ բազմաթիվ են: Հիշենք դրանցից մեկը. «Մուխթար ալ-Ախբար» երկի հեղինակը, խոսելով 1266 թվականին Եգիպտոսի Բեյբարս սուլթանի նշանավոր արշավանքի եւ Հեթումի որդի Լեւոնի ձերբակալման մասին, գրում է. «Այդ ժամանակ թագավորն էր Բասակի որդի Կոստանտինի որդի Հայթումը, ...որի որդին էր Լեւոնը»⁴¹: Եթե Հեթումի հայր Կոստանդինի անունը որպես պալ (խնամակալ) կարող էր հայտնի լինել, ապա նաեւ այս վերջինի հոր՝ Վասակի անվան հիշատակումը զարմանալի է: Հայոց արքայատոհմի ծագումնաբանության նման իմացություն դժվար է հանդիպել օտար պատմագրության մեջ: Վերահիշյալը հուշում է, որ «Իբն Լեւոն», «Իբն Լեւոնի երկիր» հասկացությունները նկատի չունեն որեւէ կոնկրետ անձ, այլ մատնանշում են Կիլիկյան Հայաստանի ԺԲ.-ԺԳ. դդ. իշխաններին ու թագավորներին:

⁴⁰ Ibn al-Qalanisi, Dhail tarikh Dimashq, ed. By H. F. Amedroz, Beyrouth, 1908, p. 258.

⁴¹ Baybars al-Mansuri, Mukhtar al-Akhbar, Cairo, 1993, p. 32.

Մնում է պարզել, թե Լեւոններից որ մեկն է դարձել տոհմի անվանադիր արար պատմագրության համար: Լեւոն Մեծագործը որդի չունեւ, հետեւաբար խոսքը նրա որդու մասին չէր կարող լինել: «Լեւոնի որդի» անվանման տակ կարող էին հասկացվել կա՛մ Թորոս Բ.-ն, կա՛մ Մլեհը (մանավանդ որ հայտնի են վերջինիս սերտ հարաբերութիւնները Նուր ալ-Դինի եւ այլ մահմեդական տիրակալների հետ): Բայց սրանցից Մլեհը (ինչպես եւ Լեւոն Մեծագործը) անմիջապես հանվում են թեկնածուների ցանկից, երբ նկատի ենք ունենում, որ «Իբն Լեւոն»-ը առաջիններից մեկը կիրառող Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160-ին, ուստի չգիտեւ եւ չէր էլ կարող իմանալ ո՛չ Մլեհին, ո՛չ էլ, առավել եւս, Լեւոն Մեծագործին:

Ինչ վերաբերում է Թորոս Բ.-ին, ապա նա իսկապես կարող էր կոչվել «Իբն Լեւոն» (Լեւոնի որդի), բայց հետագա շարադրանքում կհամոզվենք, որ այս անվանումը չի գործածվում՝ որոշակի անձ նկատի ունենալով:

Ալ-Կադի Բահա ալ-Դին Իբն Շադդադը պատասխանատու պաշտոններ է վարել Այյուբյան Սալահ ալ-Դինի մոտ, ապրել է Հալեպում եւ մահացել է 1234 թվականին: Հետեւաբար, ժամանակակիցն ու ականատեսն է այն ամենի, ինչի մասին գրում է: Նրա «Այյուբյան Սալահ ալ-Դինի կենսագրութիւնը» երկում, որից հատվածներ է թարգմանել Հ. Նալբանդյանը, նույնպես հանդիպում ենք այդ նույն հասկացութեանը՝ «Բիլադ Իբն Լեւոն», որը բառացի թարգմանվել է որպես «Լեւոնի որդու երկիր»:

«Սուլթանը, Կլըջ Արսլանին օգնելու համար, արշավեց դեպի Լեւոնի որդու երկիրը... անցնելով գնացին դեպի Նահր Ասուադը, որը Լեւոնի որդու երկրի սահմանն է կազմում»⁴², կամ «Սուլթանը... սպասում էր Հալեբի բանակներին, որոնք ուղացան, որովհետեւ նրանք զբաղված էին Ֆրանկների հետ հայոց հողի վրա՝ Լեւոնի որդու երկրում»⁴³ եւ, վերջապես, խոսելով Գրիգոր Տղա կաթողիկոսի երկու նամակների մասին՝ ուղղված Սալահ ալ-Դինին, դրանք վերապատմում է՝ այդ ընթացքում Կիլիկիոյ իշխանապետ Լեւոն Բ.-ի համար օգտագործելով նույն «Իբն Լեւոնը»⁴⁴:

Ուշագրավ է, որ առաջին նամակը վերապատմելուց հետո Իբն Շադդադը գրում է. «Սա է նամակը կաթողիկոսի, եւ այս բառը նշանակում է խալիֆա. նրա անունն է Բար Քրիքուր իբն Բասիլ»⁴⁵: Գրիգոր Տղան որդին էր (տղան էր) Վասիլի. պատմիչը երկու անգամ «տղա» բառը չգործածե-

⁴² «Այաթական աղբյուրները Հայաստանի եւ հարեան երկրների մասին», Երևան, 1965, էջ 293 (Յակոտ սյ-Համափի Արու-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմւց՝ Հ. Նալբանդյան):

⁴³ Նույն տեղում, էջ 294:

⁴⁴ Նույն տեղում, էջ 294-297:

⁴⁵ Նույն տեղում, էջ 297

լու համար հմտորեն օգտվել է ասորերեն «Բար» (որդի) բառից՝ հիանալի կերպով հասկանալով, որ Գրիգորի հոր անունն է Վասիլ, իսկ «Տղա»-ն նրա մականունն է: Արաբ մատենագրի՝ Կիլիկիայի վերնախավի անունների այս աստիճան ճշգրիտ իմացությունը մեկ անգամ եւս հաստատում է մեր՝ վերեւում բերած ենթադրությունը, որ «Իբն Լեւոն» հասկացությունը հայկական անունների վատ իմացության կամ անձերին մեկը մյուսի հետ շփոթելու արդյունք է:

Կիլիկիայի վերաբերյալ շատ հարուստ տեղեկություններ ունի Ժ.Գ. դարի նշանավոր պատմիչ Իբն ալ-Ասիրը իր «Լիակատար պատմություն», ինչպես նաեւ «Պատմություն Մոսուլի Աթաբեկների պետության» երկերում:

Խոսելով խաչակրաց առաջին արշավանքի ու Անտիոքի գրավման մասին՝ Իբն ալ-Ասիրն արդեն իսկ օգտագործում է «Հայազգի Լեւոնի որդու երկիր» (Բիլադ իբն Լայուն ալ-Արմանի) հասկացությունը⁴⁶: Նույնը հանդիպում ենք հետեւյալ հատվածում. «531 թվական (29 սեպտեմբեր 1136 - 18 սեպտեմբեր 1137) ...Այստեղից նա (կայսրը) գնաց Ադանա եւ Մամեստիա (Մասիսա) քաղաքները, որոնք կիրճերի, ամրոցների տեր Հայազգի Լեւոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի) ձեռքում էին: ...Նա այնտեղից գնաց Բաղրաս եւ դրա վրայով մտավ Հայազգի Լեւոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի) երկիրը, իսկ վերջինս շատ հարստություն տվեց ու նրան հպատակվեց»⁴⁷, կամ արդեն Ռուբեն Գ.-ին վերաբերող «576 թվական (28 մայիս 1180 - 16 մայիս 1181): Այդ տարում Սալահ ալ-Դինը հարձակվեց Հայազգի Լեւոնի որդու (իբն Լայուն ալ-Արմանի) երկիրը, Կիլիկիա Արսլանի հետ գործը վերջացնելուց հետո»⁴⁸:

Վերջապես մեջբերենք Լեւոն Մեծագործի դարաշրջանին վերաբերող հետեւյալ մի քանի հատվածները. «584 թվական (2 մարտ 1188 - 18 փետրվար 1189) Բաղրասի գրավման մասին... Իսկ սա մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տեր (Սահիբ ալ-Արման) Լեւոնի որդին (իբն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց նրա կառուցվածքը, կատարելագործեց եւ այնտեղ նշանակեց իր զինվորների խումբ, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը...»⁴⁹, կամ «602 թվական (18 օգոստոս 1205 - 7 օգոստոս 1206) Լեւոնի որդու՝ Հալեբի գավառների

⁴⁶ «Օտար աղբյուրներ Հայաստանի եւ հայերի մասին II», Արսրական աղբյուրներ Բ., Իրն ալ-Ասիր, թարգմանություն ընտրից, առաջարկ եւ ծանոթագր. Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երևան, 1981, էջ 229 (այսուհետև՝ Իրն ալ-Ասիր), ընտրվում Al-Kamil fi-I-tarikh, Beirut, 2003, VIII volume, p. 186 (այսուհետև՝ Al-Kamil fi-I-tarikh).

⁴⁷ Նույն տեղում, էջ 249, Kamil fi-I-tarikh, v. VIII, p. 358.

⁴⁸ Նույն տեղում, էջ 266, Kamil fi-I-tarikh, v. IX, p. 151.

⁴⁹ Նույն տեղում, էջ 273, Kamil fi-I-tarikh, v. IX, p. 195.

դեմ արշավանքի մասին ...Այդ տարում կիրճերի տեր Հայազգի Լեւոնի որդին (իբն Լայուն ալ-Արմանի) մի քանի անգամ արշավեց Հալեբի նահանգի վրա, կողոպտեց, հրկիզեց, գերեց եւ գերեվարեց»⁵⁰, վերջապես՝ «623 թվական (2 հունվար 1226 - 21 դեկտեմբեր 1226) Թրանկների ու Հայերի միջեւ խռովություն մասին... Այդ տարում Անտիոքի տեր Ֆրանկ Բրինսը (իշխան) հավաքեց մեծ զորք եւ շարժվեց Հայերի դեմ, որոնք իբն Լայունի (Լեւոնի որդու) երկրի կիրճերում էին [ամրացած], եւ նրանց միջեւ սաստիկ պատերազմ տեղի ունեցավ»⁵¹:

Արաբական աղբյուրները Հայերեն թարգմանողները կա՛մ պահպանել են արաբական ձևեր՝ առանց մեկնաբանություն, կա՛մ դրանք թարգմանել են որպես «Լեւոնի որդի» եւ «Լեւոնի որդու երկիր»: Բանն այն է, որ արաբերենում որեւէ ցեղ կամ արքայատոհմ հիշատակելու համար այլ ձևեր են ընդունված, եւ առաջին հերթին Լոն բառի հոգնակին՝ Banu (որդիներ, հմտ. ասորերեն Bene), որը զրվելով որեւէ անձնանվան առջեւ՝ դրան տալիս է ցեղի կամ տոհմի իմաստ: Օրինակ՝ Banu Bakr նշանակում է Բաքր ցեղ, կամ Banu Tamim՝ Թամիմ ցեղ, նույնը՝ հարստության համար՝ Banu l-Abbas՝ Աբբասյաններ, Banu Umayya՝ Օմայաններ, Banu Hamdan՝ Համդանյաններ եւ այլն: Ակնհայտ է, որ եթե արաբ պատմիչները օգտագործեին «Banu Levon» ձևեր, ապա որեւէ երկիմաստություն չէր առաջանա:

Բահա ալ-Դին իբն Շադդազը եւս, որն ինչպես տեսանք հիանալի տեղյակ է Կիլիկիայի անցուղարձից, իր երկում հաճախ օգտագործում է «Բիլադ Իբն Լեւոն» (Իբն Լեւոնի երկիր) արտահայտությունը: Պատմիչը «Իբն Լեւոն» է անվանում նաեւ Լեւոն Բ. իշխանին, որին անդրադառնում է խաչակրաց Գ. արշավանքի առիթով:

Այնուամենայնիվ, փորձենք գտնել «Իբն Լեւոն»-ի տոհմանուն լինելու միտքը հաստատող հավելյալ տեղեկություններ: Ի հավելումն իբն ալ-Ասիրից բերված նախորդ հատվածների, մի մեջբերում էլ կատարենք նրա մյուս՝ «Պատմություն Մոսուլի Աթաբեկների պետության» գործից, որտեղ խոսելով Մլեհի հանդեպ Նուր ալ-Դինի քաղաքականության մասին՝ արաբ պատմիչը գրում է. «Որպես խելամտության մի օրինակ, հիշենք նրա վերաբերմունքը Հայոց թագավոր (մալիք ալ-Արման), կիրճերի տեր՝ (սահիբ ալ-դուրուբ) Լեւոնի որդի Մլեհի (Մալիհ իբն Լայուն) հանդեպ»⁵²:

⁵⁰ Նույն տեղում, էջ 285, Kamil fi-l-tarikh, v. IX, p. 282.

⁵¹ Իբն ալ-Ասիր, էջ 331, Kamil fi-l-tarikh, v. IX, p. 371-372.

⁵² Իբն ալ-Ասիր, էջ 362:

Այս վերջին տեղեկությունը մի քանի առումով կարեւոր է: Նախ սա այն քիչ դեպքերից է երբ Ռուբինյան որեւէ իշխան հիշատակվում է իր անունով:

Մլեհի հիշատակությունը այստեղ բացառիկ է: Սա թերեւս կարելի է բացատրել Նուր ավ-Դինի հետ Մլեհի ունեցած հատուկ հարաբերություններով, մահմեդական պետության հետ նրա հաստատած, իր նախորդներից տարբերվող սերտ դաշինքով, որն անշուշտ արաբ պատմագրին կարող էր մղել առավել ուշադրություն հատկացնելու նրան: Միաժամանակ, քանի որ Մլեհի հոր անունը հենց Լեւոն է, կարող է տպավորություն ստեղծվել, թե «Իբն Լեւոն»-ը այստեղ հայրանվան իմաստ ունի, եւ արաբ պատմիչը ճշգրիտ կերպով նշել է իշխանապետի անուն-հայրանունը՝ Մալիհ իբն Լայուն (Մլեհ որդի Լեւոնի): Սակայն այս տպավորությունը խաբուսիկ է հետեւյալ պատճառով:

Նախորդ էջերում այդ նույն Լեւոն Ա.-ի, այսինքն՝ Մլեհի հոր մասին խոսելիս Իբն ավ-Ասիրը նրան չի անվանում «Լեւոն», այլ կրկին կոչում է «Իբն Լեւոն», այսինքն՝ վերոհիշյալը պատահական համընկնում է: Հետեւաբար «Մալիհ իբն Լայուն» բառակապակցության մեջ «Լեւոն»-ը ոչ թե հայրանուն է, այլ տոհմանուն եւ, տվյալ դեպքում, պետք է թարգմանվի որպես «Մլեհ Լեւոնյան»⁵³:

Վերոհիշյալը հաստատվում է մի այլ մատենագրի՝ աշխարհագրագետ Յակուտ ավ-Համավիի հաղորդումով, որն իր «Քիթաբ Մուլճամ ավ-Բուլղան»-ում, «Աղ-Թաղը», («Աս-Սաղը») հոդվածի մեջ եւս օգտագործում է «Իբն Լեւոնի երկիր» (Բիլադ իբն-Լավուն)⁵⁴ հասկացությունը: Այդ նույն երկրի «Այն Զարբա» հոդվածի մեջ Յակուտը գրում է. «Այդ քաղաքը (Տարսոնը) մինչեւ այսօր գտնվում է նրանց (Հայերի) ձեռքում: Այժմ բնակված է Հայերով եւ Իբն Լավունի երկրների մասն է կազմում»⁵⁵: Մեջբերենք մի այլ հատված «Կալաթ առ-Ռում» հոդվածից. «Մոտավորապես հիշրի 610 թվականին (23 մայիս 1213 - 12 մայիս 1214) Լավունի որդի Լավուն հայոց թագավորը, որ Ասորիքի սահմանագոտու Մսիսի, Տարսոնի եւ Ադանայի վրա է իշխում...»⁵⁶:

Թեեւ մատենագիրը ժամանակակիցն է Լեւոն Մեծագործի, բայց երբ հիշատակում է «Լեւոն հային ու նրա սերնդին», ակնհայտ է, որ խոսքը

⁵³ Իրն ավ-Ասիրի տեղեկության մեջ ուշագրավ է նաև «Հայոց թագավոր» տիտղոսը, որ նա տալիս է Մլեհին:

⁵⁴ «Արարական աղբյուրներ», էջ 45:

⁵⁵ Նույն տեղում, էջ 94:

⁵⁶ Նույն տեղում, էջ 100:

Լեւոն Ա. իշխանի մասին է: Հետագայում նա խոստում է նաեւ Լեւոն Մեծագործի մասին, բայց իբրեւ մի նոր պատմական անձի: Խիստ ուշագրավ է, որ վերջապես տրվում է Լեւոնի անձնանունը՝ «Լավոնի որդի Լավոն Հայոց թագավոր», այլ կերպ ասած՝ Լեւոն Լեւոնյան (ոչ թէ՝ Լեւոնի որդի Լեւոն, մանավանդ որ նրա հոր անունը Ստեփանն էր):

Կիլիկիայի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում նաեւ Ժ. Գ. դարի հռչակավոր պատմիչ Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմը իր «Հալեպի պատմություն» մեջ: Սա եւս լայնորեն կիրառում է «Բիլադ իբն Լաուն» (Իբն Լեւոնի երկիր) եւ «Մալիք ուլ-արման իբն Լաուն» (Հայոց թագավոր իբն Լաուն) բառակապակցությունները:

Հիշատակելով 1177 թ. Հարիմ ամրոցի պաշարմանը մասնակցող միացյալ ուժերի ու նրանց ղեկավարների մասին՝ այլոց շարքում նշում է նաեւ «Իբն Լեւոն»-ին⁵⁷: Խոսելով 1187 թ. մասին՝ կիրառում է «Իբն Լեւոնի երկիր»-ը (Բիլադ իբն Լաուն)⁵⁸. Նույն պատմիչը 1204 թ. դեպքերի մասին հաղորդում է՝ «...հարձակում գործեց Հայոց թագավոր իբն Լաունը»⁵⁹: Նույն ձեւով է պատմիչը Կիլիկիայի տիրակալին կոչում նաեւ այլ էջերում՝ թագավորին անվանելով «Իբն Լեւոն», իսկ երկիրը՝ «Իբն Լեւոնի երկիր»⁶⁰:

Մեր առաջ քաշած տեսակետը հաստատում է նաեւ Ժ. Գ. դարի մեկ այլ մատենագիր՝ Աբու Շաման (1203-1268): Նա իր երկի Դ. հատորում մի գլուխ ունի Հիջրայի 586 (1190)-ի դեպքերի մասին, որտեղ հիմնականում կրկնում է Իբն Շադդադի մեջբերած՝ Գրիգոր Տղայի նամակը՝ ուղղված Սալահ ալ-Դինին: Բայց նրանց միջեւ կա մի կարեւոր տարբերություն: Աբու Շամայի մոտ Կիլիկիայի թագավորը հիշվում է ոչ թե «Իբն Լեւոն», այլ հենց «Լեւոն» (Լաֆուն) ձեւով⁶¹: Առաջին հայացքից կարող է կասկած առաջանալ, թե հրատարակիչը «ուղղել» էր «Իբն Լեւոնը»՝ դարձնելով «Լեւոն», բայց այդ կասկածը վերանում է, երբ շարունակության մեջ Աբու Շաման օգտագործում է «Լաֆուն իբն Իստիֆանա իբն Լաուն»⁶² ձեւը, այլ կերպ ասած՝ «Ստեփաննի որդի Լեւոնը Լեւոնյան տոհմից»:

Սա մեզ հանդիպած առաջին դեպքն է, երբ ճշգրիտ կերպով տրված է Հայոց արքայի անունը, հայրանունը եւ տոհմանունը, ընդ որում, այդ ամենը՝ նույն տեղում: Այստեղ մեզ արդեն ծանոթ բառակապակցության եւ

⁵⁷ Kamal ad-Din ibn al-Adim, Tarikh ul-Halab, Damas, t.III, 1968, p. 36.

⁵⁸ Ibidem, p. 91.

⁵⁹ Ibidem, p. 155.

⁶⁰ Ibidem, p. 156-160, 168.

⁶¹ Abu Shama, Kitab al-Raodatayn fi Akhbar al-Dawlatayn, al-Nuriyya wa al-Salahiyya, Beirut, 2002, IV, p. 77-78 (այստիպում՝ Abu Shama).

⁶² Abu Shama, IV, p. 79.

տվյալ անձի իրական հայրանունի առկայությունը կողք-կողքի վերջնականապես համոզիչ դարձրեց «Իբն Լեւոն»-ի իմաստային նշանակությունը:

Ի՞նչն էր պատճառը, որ արաբ պատմագրության մեջ Լեւոն Ա.-ն ոչ միայն մեծ տեղ գրավեց, այլև հենց նա իր անունը տվեց ողջ տոհմին: Ինչո՞վ էր տարբերվում Լեւոնը իր պապից, հորից, կամ եղբորից: Առաջին հերթին նրանով, որ թեկուզ եւ կարճ ժամանակով (1132-1137), բայց եւ այնպես կարողացավ տիրանալ Դաշտային Կիլիկիային՝ իր մեծ քաղաքներով (Տարսոն, Ադանա, Մամեստիա) հանդերձ:

Տեղին է մի փոքր ակնարկ կատարել, թե ինչ տեղ էր զբաղեցնում Կիլիկիան արաբների պատմության մեջ, որից էլ բխում է արաբ պատմագրության ներկայացուցիչների վերաբերմունքը այդ երկրամասի հանդեպ: Կիլիկիայի տարածքը Է.-Ժ. դարերում, այս կամ այն չափով, մաս է կազմել արաբամահմեդական պետությունների: Նախ՝ այն նվաճվել է Օմայր եւ Օսման խալիֆաների զորավարների կողմից, ապա՝ մաս է կազմել Օմայան եւ Աբբասյան խալիֆայությունների, իսկ հետո՝ նաեւ Համդանյանների պետության: Մի կարճ ժամանակով նույնիսկ նվաճվել է Եգիպտոսի թուլունիների կողմից: Վերջապես, Ժ. դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը այն վերանվաճում է:

Խալիֆայության շրջանում Դաշտային Կիլիկիան մի մասն էր արաբական «Բիլադ ալ-Շամ» (Ասորիք, կամ «Մեծ Ասորիք») վարչական միավորի: Լեւոնային Կիլիկիան դուրս էր մնում «Բիլադ ալ-Շամ»-ից: Դաշտային Կիլիկիայի գլխավոր քաղաքը՝ Տարսոնը, որը դեռեւս հռոմեական ժամանակներից Կիլիկիայի վարչական կենտրոնն էր, նաեւ կարեւոր կրոնական նշանակություն ուներ ոչ միայն քրիստոնյաների (համարվում է Պողոս առաքյալի ծննդավայրը), այլև մահմեդական արաբների համար, քանի որ Տարսոնում 833 թվականին թաղվել է նշանավոր Մամուն Աբբասյան խալիֆան:

Միաժամանակ, ռազմական առումով, Ասորիքի հյուսիսը եւ Վերին Միջագետքը միավորվում էին, այսպես կոչված, «ալ-Ավասիմ» (Պաշտպանական գոտի) հասկացության մեջ, որի նպատակը Բյուզանդիայի դեմ պայքարն էր: Այս Ավասիմի առաջնագիծը կոչվում էր «Սուղուր» (Սահմանային ամրությունների գոտի), որն իրականում առանձնացված էր Ավասիմից, բայց երբեմն նաեւ այս երկուսը միավորվում էին մեկ հրամանատարության տակ: Ժ. դարում Ավասիմի մայրաքաղաքը Անտիոքն էր:

Բյուզանդացիների կողմից այդ բոլոր տարածքների վերանվաճումից հետո Ավասիմը մնաց որպես աշխարհագրական անվանում⁶³:

Ինչ վերաբերում է «Սուղուր»-ին («Սաղր» բառի հոգնակին), ապա այն արդեն ընդգրկում էր ողջ Կիլիկիան՝ թե՛ Դաշտայինը եւ թե՛ Լեռնայինը: Սակայն արաբ վերաբնակիչները հիմնականում հաստատվել էին Դաշտային մասում: Իսկ Լեռնային Կիլիկիան, իր բերդերով ու ամրություններով, դիտարկվում էր որպես ռազմականացված մի գոտի հոռոմների (բյուզանդացիների) դեմ պայքարում եւ, ի վերջո, Լեռնային Կիլիկիայում արաբաբյուզանդական գրեթե մշտական հակամարտության պայմաններում ավելի շատ զինվորական կայազորներ կային, քան հիմնական բնակչությունը:

Այսպիսով, ինչպես տեսանք, արաբական շրջանում Դաշտային Կիլիկիան մտնում էր մեկ վարչական՝ «Շամ», եւ երկու ռազմական միավորումներին՝ «Ավասիմ»-ի եւ «Սուղուր»-ի մեջ:

Լեւոն Ա. իշխանապետի կողմից Դաշտային Կիլիկիան գրավելու հանգամանքը, կարելի է ասել, միջազգային արձագանք ունեցավ, քանի որ պատճառ հանդիսացավ, որ Բյուզանդիայի կայսր Հովհաննես Կոմնենոսն (1118-1143) անձամբ գլխավորելու պատժիչ արշավանքը դեպի Կիլիկիա եւ Ասորիք:

Հարուստ տեղեկություններ է հաղորդում Յակոբոս ալ-Համավին. «Այն բոլոր վայրերը, որոնք թշնամու երկրին մոտ են, կոչվում են «Թուղուր», եւ դրանք կազմում են սահմանային անցքեր: Կան բազմաթիվ վայրեր, որոնց մեջ Շամի Թաղը, որ թուղուրների մի ամբողջություն է, եւ այդ անվան ներքեւ բովանդակվում են բազմաթիվ երկրներ, որոնք ծանոթ են Բիլադ իբն Լավոն անունով: ...Ահմադ իբն Յահյա իբն Ջաբրը վկայում է, որ Շամի Թուղուրը գրավվեց Օմար եւ Օթման խալիֆաների օրով, եւ ապա Անտիոքն ու մյուս վայրերը կոչվեցին «Ավասիմ»: Մուսուլմաններն այդտեղից անցնում էին հույների երկիրը արշավելու համար... Ապա Հալեբի վրա հարձակվեցին հույները հիջրի 351 թվականին (962-963): Բնակիչներից ջարդեցին, ինչքան որ կարողացան: Սայֆ ադ-Դաուլան, տկարացած լինելով, Ասորիքը թողեց առանց պաշտպանության եւ վերադարձավ Մուֆարղին եւ այդպիսով Թաղը մինչեւ Համաթ դատարկված լինելով՝ Նիկեֆորը եկավ դեպի Ասորիք, պաշարեց Մսիսը, գրավեց այն, հետո Թարսուսը եւ շրջակա քաղաքները: Եվ այս տեղի ունեցավ հիջրի 354 թվականին (965): Երկիրը մնաց նրանց⁶⁴ ձեռքում, մինչեւ որ

⁶³ C. Marius, al-Awasim, The Encyclopaedia of Islam, v. I, Leiden & New York, 1986, p. 761-762.

⁶⁴ Այսինքն՝ բյուզանդացիների:

այդ վայրերի իշխանությունը տիրապավ Լևոն հայր, որի սերնդի ձեռքն էլ գտնվում է այն մինչև օրս»⁶⁵:

Յակոբ ալ-Համավիի այս հաղորդումը մի քանի առումով կարեւոր է: Նախ՝ պարզ է դառնում, որ «Սուղուր (Թուղուր)» հասկացության Շամի հատվածն ամբողջությամբ համընկնում է Կիլիկյան Հայաստանի հետ, եւ այն, ըստ արաբ աշխարհագրագետի, կոչվում է «Բիլադ իբն Լավուն» (Իբն Լեւոնի երկիր): Մատենագիրը Մամեստիան, Տարսուր եւ շրջակա քաղաքները Ասորիքի (Շամ) բաղկացուցիչ մասն է համարում: Եվ վերջապես՝ քննարկվող նյութի տեսակետից ամենակարեւոր տեղեկությունը՝ Կիլիկիան բյուզանդացիների ձեռքից խլել է Լեւոն հայր (այսինքն Լեւոն Ա. իշխանապետը (1129-1137)), «որի սերնդի ձեռքում այդ երկիրը գտնվում է մինչև օրս» (1224 թ.):

Յակոբ ալ-Համավիին Լեւոն Մեծագործի ժամանակակիցն է, նա իր գիրքն ավարտին է հասցրել Հայոց թագավորի մահից ընդամենը հինգ տարի անց, ուստի քիչ հավանական է, որ նա այդպիսի ձեւակերպում տար: Ուստի մեկ անգամ եւս համոզվում ենք, որ խոսքը Լեւոն Ա. իշխանապետի մասին է: Ուշադրության արժանի է նաեւ Լեւոնի հիշատակումը ոչ միայն որպես պետություն, այլեւ տոհմի հիմնադիր՝ «Լեւոնի սերունդ»:

Լեւոն իշխանի ձեռք բերած միջազգային հռչակին վերաբերող մի հավելյալ տեղեկության հանդիպում ենք ԺԲ. դարի բյուզանդացի հեղինակ Միքայել Իտալիկոսի «Ներբողյանում», որը նվիրված է բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսին (1118-1143): Այս գործը բնագրով (հունարեն) հրատարակվել է միայն 1970 թվականին⁶⁶, իսկ նրա հայերեն թարգմանությունն ու ուսումնասիրությունը իրականացրել է ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը ավելի ուշ՝ 1984 թ.⁶⁷:

Ներբողյանում փառաբանվում է Բյուզանդիայի Հովհաննես Կոմնենոս կայսրը Կիլիկիայում եւ Ասորիքում 1136-1138 թթ. տարած հաղթանակների համար: Հայտնի է, որ այդ արշավանքի ժամանակ զերվեց Լեւոն իշխանը եւ որոշ ժամանակով Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում վերացվեց:

Ըստ Միքայել Իտալիկոսի այս երկի՝ Լեւոն իշխանն իրեն թագավոր է հռչակել, թագ (դիադեմա) է կապել ու կարմիր կոշիկներ հագել, մի բան,

⁶⁵ «Արարական աղբյուրներ», Լջ 45-46:

⁶⁶ Franca Fusco, Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno, Աթենքում հրատարակված մի ժողովածուի մեջ, 1969-1970, Լջ 146-169:

⁶⁷ Հ. Բարթիկյան, Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» եւ Կիլիկիայի հայոց առաջին թագավորի լինելը, ՊԲՀ, 1984, թ. 4, Լջ 216-229:

որ համասարազոր էր Կիլիկիան անկախ պետություն հռչակելուն: Նույն այդ երկում հեղինակը Լեւոնին կոչում է թագավոր, իսկ երկիրը՝ թագավորություն: Հենց սա էլ համարվել էր հանդգնություն՝ պատճառ հանդիսանալով Հովհաննես կայսեր պատժիչ արշավանքի: Այս երկը, թեեւ ունի գեղարվեստական բնույթ, միաժամանակ հիմնված է պատմական փաստերի վրա եւ հավաստի է իբրեւ աղբյուր:

«Ներբողյանի» մեջ չի նշվում Լեւոնի կողմից ինքն իրեն թագավոր հռչակելու տարին: Կարելի է ենթադրել, որ դա 1132 թվականն էր:

Այսպիսով, մեր առաջարկած մեկնաբանությունը, որն արդեն իսկ բավականաչափ հիմնավորված էր հենց արաբ պատմիչների վկայություններով, հավելյալ հիմնավորումներ է ստանում բյուզանդացի հեղինակի հաղորդումով:

Քննության ենթարկելով ԺԲ.-ԺԳ. դարերի պատմագրությունը եւ ուսումնասիրելով, թե ինչպես են տարբեր պատմիչներ արձագանքել Կիլիկյան Հայաստանի պատմության կարեւոր անցքերին եւ ինչպիսի գնահատականներ են տվել բախտորոշ դեր խաղացած գործիչներին, տեսնում ենք, որ գործ ունենք դասական մի օրինակի հետ, երբ պետության առաջնորդը իր երկրի ներսում եւ երկրից դուրս ստանում է շատ տարբեր գնահատականներ:

Հայտնի է, որ հայ պատմագրության մեջ չկա որեւէ տեղեկություն, կամ թեկուզ ակնարկ, որ Լեւոն Ա.-ը թագադրվել է կամ իրեն անկախ է հռչակել: Մինչդեռ, ինչպես տեսանք, այդ մասին է խոսվում ժամանակի բյուզանդական մատենագրության մեջ:

Լեւոն Ա.-ի վերաբերյալ հայ պատմագրության մեջ կան գնահատանքի ու գովեստի խոսքեր, բայց նա որեւէ ձեւով չի համարվում ոչ տոհմի եւ ոչ էլ հայոց պետության հիմնադիր, մինչդեռ, ինչպես տեսանք, արաբ պատմագրության մեջ հայոց ողջ արքայատոհմը կոչվում է նրա անունով:

Կարելի է ասել, որ հայոց մեջ ավանդաբար ոչ պակաս, նույնիսկ ավելի բարձր է գնահատվել Լեւոնի որդու՝ Թորոսի գործունեությունը: Թորոս Բ.-ը, փախչելով գերությունից եւ վերադառնալով հայրենիք, ոչ միայն վերականգնեց Ռուբինյան իշխանությունը (որը համասարազոր էր նոր իշխանություն հիմնելուն), այլեւ ջախջախեց Անդրոնիկոսի բյուզանդական բանակը, ապա հաջող պայքար մղեց սելջուկների եւ խաչակիրների դեմ: Վերջապես, Մանուել Կոմնենոս կայսրի՝ գեպի Կիլիկիա եւ Անտիոք կատարած արշավանքի ժամանակ դրսեւորվեց Թորոս Բ.-ի նաեւ գիվանագիտական ձիրքը:

Փաստ է, որ եթե Լեւոն Ա.-ի գործունեության արդյունքում իշխանությունը վերացվում է, ապա Թորոս Բ.-ի (նաեւ Մլեհի) երկարատեւ ղեկավարումը Հասցնում է երկիրը մի վիճակի, երբ լիարժեք պետություն դառնալն ու թագավորություն հռչակվելը ընդամենը ժամանակի խնդիր էր:

Ժամանակի Հայ պատմագրության խոշորագույն դեմքերից մեկը՝ Կիրակոս Գանձակեցին, իր Հայոց Պատմության մեջ Թորոս Բ.-ին կոչում է «մեծ իշխան»⁶⁸ կամ «մեծ իշխանաց իշխան Հայոց»⁶⁹, իսկ Լեւոն Ա.-ին ոչ միայն նման տիտղոսներ չի վերագրում (պարզապես անվանում է իշխան), այլեւ նրա իշխանության տարիներին անդրադառնում է Հարեւանցի՝ նրա անունը հիշատակելով միայն իր որդիների մասին խոսելիս: Փոխարենը, Գանձակեցին մի մեծ հատված է նվիրում Թորոս Բ.-ի օրոք տեղի ունեցած անցքերին⁷⁰:

Վահրամ Բաբունու երկում եւս տեսնում ենք, որ ակնհայտորեն գերազանցությունը տրվում է որդուն, ոչ թե հորը, եւ նույնիսկ երկիրն ստանում է նրա անունը.

«Արիարար՝ իշխանացեալ,
Եւ յամենայն՝ ազգաց սիրալ.
Որք զԿիլիկիա՝ անուն թողալ,
Եւ Թորոսի երկիր՝ կոչեալ»⁷¹:

Ուշագրավ է, որ ԺԲ.-ԺԳ. դարերում «Իբն Լեւոն»-ը «Լեւոնյան» իմաստ ստանալով, այնուհետեւ ժամանակային առումով հետագարձ կիրառություն է գտնում, գործածվելով, օրինակ, ԺԱ. դարավերջի եւ ԺԲ. դարասկզբի համար, երբ Լեւոն անունով իշխան կամ թագավոր Կիլիկիայում ընդհանրապես չկար: Նման հաղորդումների հանդիպում ենք Իբն ալ-Ասիրի գործում, ինչպես նաեւ Իբն ալ-Իբրի (Բար Հեբրեոսի) արաբերեն երկում:

Իբն ալ-Ասիրը, խոսելով 1 խաչակրաց արշավանքի եւ Անտիոքի գրավման մասին, հաղորդում է. «491 թվական (9 դեկտեմբեր 1097 - 27 նոյեմբեր 1098) Ֆրանկների Ասորիոր գրավելու մասին... Երբ Ֆրանկները որոշեցին Ասորիքի (Շամ) վրա հարձակվել, գնացին Կ. Պոլիս, որպեսզի նեղուցը

⁶⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Կ. Մկիթ-Օհանյանյանի, Նրկան, 1961, էջ 154 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

⁶⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 109:

⁷⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 109-110:

⁷¹ Վահրամայ Բարունոյ, Ուտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859, էջ 195 (այսուհետև՝ Վահրամ Բարունի):

անցնելով՝ մտնեն մահմեդականների երկիրը, ընթանալով ցամաքի ճանապարհով, որն ավելի դյուրին էր: ...Երբ հասան, Կիլիջ Արսլանն իր զորքով դիմադրեց եւ արգելք եղավ, սակայն նրանք կովեցին ու հաղթեցին [չորս հարյուր] իննսուն թվականի Ռաջաբ ամսին (4 հունիս - 3 հուլիս): Նրա երկրի միջով անցնելով նրանք մտան հայազգի Լեւոնի որդու (Իրն Լայուն ալ-Արմանի) երկիրը, որի միջով անցան եւ դուրս եկան Անտիոք (Անթաթիա) ու պաշարեցին»⁷²:

Իսկ Իրն ալ-Իբրին (Բար Հեբրեոսը) գրում է. «...այդ տարին (1112) մահացավ Բասիլ Հայր՝ Կիրճերի՝ Իրն Լեւոնի երկրի տերը, որին կոչում էին Գող Բասիլ»⁷³:

Այս վերջին տեղեկությունը էլ ավելի է ընդարձակում «Իրն Լեւոնի երկիր» հասկացությունն իմաստային սահմանները, քանի որ Ռուբինյան իշխանության կամ Կիլիկիայի սահմաններից դուրս գալով, այն իր մեջ ներառում է նաեւ Գող Վասիլի հողերը, այսինքն՝ Եփրատացիքը: Այլ կերպ ասած՝ այստեղ արդեն խոսքը վերաբերում է ողջ «Հայաշխարհին»: Հատկանշական է, որ «Դուրուր» (Կիրճեր, Լեւոնացիներ) արտահայտությունը համապատասխանում է Կիլիկիային (որը հայտնի է իր լեւոնացիներով), բայց այնքան էլ չի համապատասխանում Եփրատացիքի աշխարհին: Այնուամենայնիվ, ԺԳ. դարի պատմիչը հետադարձ ձեռով ԺԱ. դարավերջի համար կիրառում է ոչ միայն «Իրն Լեւոնի երկիր» արտահայտությունը, այլեւ զուտ Կիլիկիային վերաբերող «Կիրճեր»-ը:

Ժամանակային առումով թե «Իրն Լեւոն»-ը եւ թե «Իրն Լեւոնի երկիր»-ը կիրառելի են՝ սկսած ԺԱ. դարի վերջերից մինչեւ ԺԳ. դարի 20-ական թվականները:

Հայտնի է, որ 1226 թ. Հեթում Ա.-ի գահակալումը հաճախ չի ընկալվել որպես նոր արքայատոհմի հաստատում, այսինքն՝ չի համարվել, որ Ռուբինյանների հաջորդում են Հեթումյանները, այլ՝ որպես միացյալ Ռուբինյան-Հեթումյան տոհմի հաստատում (Ջաբելի եւ Հեթումի ամուսնությունը), կամ էլ պարզապես որպես Ռուբինյանների շարունակություն: Մինչդեռ արաբ պատմագրության մեջ նույն «Իրն Լեւոն»-ի կիրառությունը հետեւելով, կարելի է եզրակացնել, որ նրանք հստակ սահմանադատել են նաեւ Կիլիկյան Հայաստանի իշխող տոհմերին, չնայած Հեթումյաններին տրվող առանձին ինչ-որ մի տոհմանուն չեն կիրառում⁷⁴: Դրա

⁷² Իրն ալ-Ասիր, ԼՊ 229, Kamil fi-l-tarikh, v. VIII, p. 186.

⁷³ Ibn al-Ibri, p. 346.

⁷⁴ «Իրն Լեւոնի» համանունությամբ դա կարող էր լինել, ասենք, «Իրն Հեթում» կամ «Իրն Կոստանդին»:

ապացույցն է այն, որ մեզ հայտնի աղբյուրներում, ժ.Գ. դարի 20-ական թվականներից սկսած, այլևս չեն գործածվում «Իբն Լեոն», «Իբն Լեոնի երկիր» արտահայտությունները, մինչդեռ համատարած կերպով գործածվում են «Հայոց թագավոր», «Հայոց երկիր», «Սսի երկիր», «Սսի երկրի թագավոր», «Սսի տեր» ձևերը, որոնք սակայն նախապես էլ՝ «Իբն Լեոն»-ին զուգահեռ, կիրառվում էին:

Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը: Դիտարկենք որոշ հատվածներ ժ.Գ. դարի պատմիչ ալ-Ջահաբիի «Գիրք մահմեդական պետությունների մասին» երկից, որը Կիլիկյան Հայաստանի մասին շատ արժեքավոր տեղեկություններ է պարունակում: Հատկանշական է, որ նույն հեղինակը Մլեհի, կամ Լեոն Մեծագործի մասին խոսելիս կիրառում է «Իբն Լեոն»-ը, իսկ հետագա (Հեթումյան շրջանի) դեպքերի մասին խոսելիս այն այլևս չի գործածում:

Օրինակ, խոսելով Մլեհ-Նուր ալ-Դին հարաբերությունների մասին, Հիջրայի 568 (1172/1173) թվականի դեպքերի մեջ օգտագործում է «Մալիհ իբն Լաուն ալ-Արմանի ալ-Նասրանի», այսինքն՝ «Հայ քրիստոնյա Մլեհ Լեոնյանը»⁷⁵ արտահայտությունը: Նույն պարբերության մեջ Կիլիկիայի վերաբերյալ օգտագործվում են մի դեպքում «Բիլադ Սիս» (Սսի երկիր), մի այլ տեղում՝ «Մամլաքա Սիս» (Սսի թագավորություն)⁷⁶ ձևակերպումները:

Խոսելով Լեոն Մեծագործի կողմից Անտիոքի առաջին պաշարման մասին (Հիջրայի 600՝ 1203/1204)՝ ալ-Ջահաբին կիրառում է «Սահիբ Սիս» (Սսի տերը) անվանումը⁷⁷, սակայն արդեն Հիջրայի 602 (1205/1206) թվականի՝ Հալեպի երկրի վրա Լեոն թագավորի գլխավորությամբ հայերի հարձակումների մասին գրելով՝ նա արքային անվանում է «Սահիբ Սիս Իբն Լայուն» (Սսի տեր Իբն Լեոն)⁷⁸:

Մեջբերենք եւս մի քանի հատված, որոնք վերաբերում են ժ.Գ. դարի վերջին եւ ժ.Գ. դարի առաջին տասնամյակներին: Հիջրայի 692 (1292/1293) թվականի դեպքերի շարքում պատմիչը գրում է այն մասին, որ Եգիպտոսի սուլթանը պահանջեց Բեհսանին Կիլիկիայի թագավորից, եւ վերջինս նախընտրեց հանձնել այն: Այստեղ Հայոց թագավորին հիշատակում է որպես «Սահիբ Սիս» (Սսի տերը)⁷⁹:

⁷⁵ Al-Dahabi, Kitab duwal al-Islam, Beirut, 1999, p. 73 (այսինքնով՝ Al-Dahabi).

⁷⁶ Ibidem.

⁷⁷ Al-Dahabi, p. 107.

⁷⁸ Ibidem, p. 109.

⁷⁹ Ibidem, p. 217-218.

Նույն Ալ-Ջահաբին 697(1297/1298) տարվա դեպքերի մեջ հիշատակում է մամուլքների հարձակման մասին, թե ինչպես պաշարեցին «Սսի ամրոցները»⁸⁰: Իսկ 736 (1335/1336) թվականի մասին խոսելիս Ալ-Ջահաբին նշում է կիլիկեցիներից մի ամրոց գրավելու դեպքը. «Եվ գրավեց Նաֆիր ամրոցը Սսի երկրում...»⁸¹:

ԺԴ. դարի պատմիչներից է Իբն Բատուտան է, որն անձամբ անցել է Կիլիկիայով, իր ճամփորդությունների մասին պատմող գրքում հաղորդում է հետեւյալը. «Բերդը (Բաղրաս) ամուր եւ անառիկ է: Նրա մոտ կան պարտեզներ եւ արտեր: Այդ տեղից մտնում են Սսի երկիրը, այն է քաֆիր հայերի երկիրը: Նրանք Մալիք-ալ-Նասիրին հպատակ են եւ նրան հարկ են տալիս»⁸²:

«Սսի երկիր» արտահայտությունը կիրառվում է արաբ պատմագրության մեջ ԺԲ. դարի վերջերից, այն բանից հետո, երբ 1173-ին Սիսը դառնում է Ռուբինյան իշխանապետության մայրաքաղաք: Շուտով Սիսը ոչ միայն վարչաքաղաքական, այլեւ առեւտրատնտեսական առումով կարեւոր նշանակություն է ձեռք բերում՝ հավասարվելով ու գերազանցելով Կիլիկիայի հին ավանդույթներով քաղաքներին՝ Տարսոն, Ադանա, Մամեստիա, Անազարբա: Վերջապես ԺԳ. դարի վերջին (1292-ին Հռոմկլայի գրավումից հետո) Սիսը դառնում է նաեւ կաթողիկոսանիստ քաղաք եւ քաղաքական ու հոգեւոր կենտրոն: Հավանաբար սրանով պետք է բացատրել, որ արաբ պատմիչներն ավելի ու ավելի շատ են սկսում գործածել «Սսի երկիր» արտահայտությունը, իսկ հայոց թագավորներին էլ կոչում են «Սսի երկրի տեր», կամ պարզապես «Սսի տեր», «Սսի թագավոր»: Ուշ շրջանի պատմիչների գործերում այս անվանումը ավելի հաճախ է կիրառվում, քան «Հայաստան», «Հայոց երկիր» անվանումը, իսկ «Իբն Լեւոն», «Իբն Լեւոնի երկիր» բառակապակցությունները այլեւս չեն գործածվում:

Արդեն իսկ ուսումնասիրված նյութի վրա մի շատ կարեւոր տեղեկություն է ավելացնում ԺԳ. դարի պատմիչ Իբն ալ-Դավադարին: Իր բազմահատոր պատմական երկի Ը. հատորում, խոսելով Հիջրայի 568 (1172-1173) թվականին տեղի ունեցած դեպքերի մասին՝ մանրամասն պատմում է Մլեհի եւ Նուր ալ-Դինի դաշինքի, ինչպես նաեւ բյուզանդացիների ու

⁸⁰ Ibidem, p. 225-226. Ինչպես հայտնի է՝ Մարաշի քուն Կիլիկիայից դուրս է ել մտնում Լ. Արիստատիսի մեջ: Պարզ է, որ արաբ պատմիչը հայերի կողմից ցանկացած նվաճված տարածք անվանում է Սսի երկիր (Սիսուան), անկախ այն բանից՝ դա աշխարհագրականորեն Կիլիկիա է, թե ոչ, անգամ Գող Վասիլի իշխանությունը կոչվում է Սսի երկիր:

⁸¹ Al-Dahabi, p. 281.

⁸² Իբն Բատուտա, Հր. Աճադանի թարգմանությամբ, Նրևան, 1940, էջ 9:

խաչակիրների դեմ Մլեհի մղած հաջող պայքարի եւ ողջ Կիլիկիան իրեն ենթարկելու մասին: Այստեղ նա «Իբն Լեոն»-ի փոխարեն գործածում է եւս մի հասկացություն՝ «Բայթ Լաուն», այն է՝ «Տունն Լեոնի»: Հետաքրքիր է, որ այս հասկացությանը հանդիպում ենք Կիլիկիայի մասին պատմող գլխի հենց վերնագրում, որը կարելի է թարգմանել այսպես՝ «Հիշենք [թե ինչպես] Լեոնի տունը (գարմը) դարձավ Սսի տերը (կամ Սսի վրա տիրապետող դարձավ)»⁸³:

Իբն ալ-Դավադարին իր բազմահատորանոց երկը գրել է ԺԳ. դարի վերջին եւ ԺԴ. դարի սկզբին, այսինքն՝ այն ժամանակ, երբ այլեւս գործածական չէր «Իբն Լեոն» հասկացությունը եւ փոխարենը շատ գործածական էր «Սսի տերը», «Սսի երկրի տերը», «Սսի թագավորը»: Այստեղ պատմիչը կիրառում է «Իբն Լեոն»-ին փոխարինող, միաժամանակ նույն այդ «Իբն Լեոն»-ը վերջնականապես բացատրող մի բառը՝ «Լեոնի տուն»: Հետագա տեքստում հանդիպում ենք նաեւ արդեն մեզ ծանոթ «Իբն Լեոն»-ին հետեւյալ նախադասության մեջ. «...եւ նրա (այդ երկրի) վրա իշխեց Մալիհ իբն Լաունը»⁸⁴: Փաստորեն ԺԴ. դարում եւս արաբ պատմիչը օգտագործում է «Իբն Լեոն»-ը, բայց միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է 1172-1173-ի դեպքերին:

Այստեղ պատմիչը մի շատ կարեւոր բացատրություն է տալիս: Նույն այդ «Լեոնի տունը» (Տունն Լեոնեանց) ընթերցողին ներկայացնելու համար ավելացնում է «Այդ Լեոնի տունը հենց Թաքֆուրի (թագավորի) տունն է»⁸⁵, այլ կերպ ասած՝ բացահայտում է Լեոնյանների (Ռուբինյանների) արքայատոհմ լինելու հանգամանքը:

Վերջում օրինական հարց կարող է ծագել. եթե «Իբն Լեոն» անվանումը նշանակում է «Լեոնյաններ» (հավասարազոր «Ռուբինյաններ»-ին), այդ դեպքում ինչպես պետք է վարվի թարգմանիչը կամ հետազոտողը, որը թարգմանում է արաբ պատմիչի երկը կամ նրանից հատվածներ է մեջբերում: Մեր կարծիքով «Իբն Լեոն», կամ «Իբն Լեոնի երկիր» արտահայտությունները պետք է ընկալել որպես քարացած ձեւեր, որոնք ենթակա չեն թարգմանության: Այսինքն՝ ցանկալի է հայերեն տեքստում դրանք նույնությամբ պահպանել՝ միաժամանակ օժտելով համապատասխան բացատրություններով ու ծանոթագրություններով:

⁸³ Ibn al-Dawadari, Kanz al-durar wa jami al-ghurar, VIII, Cairo, 1971, p. 180.

⁸⁴ Ibidem.

⁸⁵ Ibidem.

РЕЗЮМЕ

Арабские историки XII-XIV вв. при описании Киликийской Армении и ее правителей в период до 20-ых годов XIII в., говоря об известной армянской династии Рубенидов, используют термин “Ибн Левон”. Исследуя смысловое значение термина “Ибн Левон”, мы пришли к заключению, что это принятая форма в арабской историографии для обозначения династии Рубенидов в Киликии и, соответственно, выражение “Билад Ибн Левон” (Страна Ибн Левона) относится к Киликийской Армении. В арабской историографии для обозначения какой-либо династии употребляется слово “Бану” (Сыновья), как например, «Бану л-Аббас» - Аббасиды. Говоря же о Левонидах, употребляется единственное число слова “Бану” - “Ибн”, что и вызывает путаницу при дословном переводе. Поэтому термин “Ибн Левон” следует переводить не как “Сын Левона”, а как “Из рода Левона”, т.е. - “Левонид” (Рубенид). Мы также пришли к заключению, что термин восходит к имени князя Левона I (1129-1137), первым из Рубенидов завоевавшего земли Равнинной Киликии, которая, как часть Исторической Сирии, имела гораздо большее значение для арабского мира. Поэтому арабские авторы, в отличие от армянских, основоположником династии считают Левона.

SUMMARY

Arab historians of the 12th-14th centuries, describing the famous Armenian dynasty of Cilicia - Rubenids, use the term “Ibn Levon” in their reports on Cilician Armenia and its rulers up to the 20s of the 13th century. Considering the meaning of the term “Ibn Levon” we concluded that it is a common form used in the Arab historiography to name the Rubenid dynasty in Cilicia, and accordingly, the expression “Bilad Ibn Levon” (Country of Ibn Levon) refers to the Cilician Armenia. In Arab medieval historiography, the word “Banu” (Sons) is used to name a dynasty, e.g. Banu l-Abbas - Abbasids. While in this case they use the singular form - “Ibn”, which creates confusion if translated literally. That’s why the term “Ibn Levon” has to be translated not as “Son of Levon”, but as “From the kin of Levon”, or simply “Levonid” (Rubenid). We also observed that the origin of this term goes back to Prince Levon I (1129-1137), the first to conquer the Lower Cilicia, which used to have much more importance in the Arab milieu. That is why Prince Levon was considered as the founder of the dynasty by the Arab authors (unlike the Armenians).

